

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՐՄԱՇՁԲ-2022/20Ծ-3**

ք. Երևան

24 » 08 2022 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ -ն, ի դեմս գլխավոր տնօրեն Է. Բեգոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **չափաբաժին 3-ով նախատեսված /Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 9+000- կմ11+779.75 հատվածի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 240 օր՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **4 400 000 000** (չորս միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որից **733 333 333.333** (յոթ հարյուր երեսուներեք միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երեցյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ճանապարհ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալախովիտ
«Արդշինբանկ ՓԲԸ, Էրեբունի մ/6
ՀՀ 2472300165260010
ՀՎՀՀ 03512651
Գլխավոր տնօրեն
Է. Բեզոյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
/Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 9+000-կմ11+779.75 հատվածի
վերակառուցման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	143145	2 250	322 076 250
2	206-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	29811	2 300	68 565 300
3	9ж-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	240469	1 900	456 891 100
4	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	128830	2 500	322 075 000
5	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում բուլղոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	14315	2 900	41 513 500
6	Նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	26830	2 500	67 075 000
7	Նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողի մշակում բուլղոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	2981	2 900	8 644 900
8	Նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	348378	2 900	1 010 296 200
9	Նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողի մշակում բուլղոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	38708	2 900	112 253 200
10	Նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողի մշակում բուլղոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում. ջրում. խտացում)	մ³	8593	3 500	30 075 500
11	Նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	5103	3 800	19 391 400
12	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	59157	2 400	141 976 800
13	10e-IV կարգի բնահողի մշակում բուլղոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	6572	2 800	18 401 600
14	10eIV կարգի բնահողի մշակում բուլղոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում. ջրում. խտացում)	մ³	3308	3 500	11 578 000
15	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	15852	3 800	60 237 600
16	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 շ. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում իջատեղերի հետադարձ լիցքի համար	մ³	234	2 400	561 600

17	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 2. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում խողովակների հետադարձ լիցքի համար	մ ³	59	2 400	141 600
18	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ3 2. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ. կուտակում կողնակների լիցքի համար	մ ³	3038	2 400	7 291 200
Աստիճանների կառուցում					
1	9ж-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ ³	679	2 200	1 493 800
2	Աստիճանների կառուցում նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ ³	1131	2 300	2 601 300
3	Աստիճանների կառուցում 10e-IV կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ ³	915	2 500	2 287 500
Ընդամենը I					2 705 428 350
II. Կողային առուներ					
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ.	մ ³	174	7 400	1 287 600
2	206-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ.	մ ³	94	7 450	700 300
3	9ж-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ.	մ ³	952	7 400	7 044 800
4	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ ³	165	2 500	412 500
5	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ ³	9	14 000	126 000
6	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ	մ ³	89	2 500	222 500
7	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 206-VIII կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ ³	5	14 000	70 000
8	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 1կմ միջին հեռ	մ ³	1508	2 100	3 166 800
9	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ ³	79	14 000	1 106 000
10	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում էքս 0.65մ3 2.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ	մ ³	18	2 500	45 000
11	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 2.տ տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ ³	1	14 000	14 000
Ընդամենը II					14 195 500
III. Կողնակներ					
1	10e-IV կարգի նախապես մշակած բնահողի բարձում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի. տեղափոխում կողնակների լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում) h=26սմ	մ ³	1215	3 000	3 645 000
2	10e-IV կարգի նախապես մշակած բնահողի բարձում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի. տեղափոխում կողնակների լիցք 5կմ (հարթում. ջրում. խտացում) h=26սմ	մ ³	1823	3 500	6 380 500
3	Կողնակների ամրացում ավազակույտային նյութով հմիջ.=10սմ.	մ ²	11686	900	10 517 400
Ընդամենը III					20 542 900
IV. Երթևեկելի մաս					
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակույտի) h=10 սմ	մ ²	36931,9	1 100	40 625 090

2	Խճավազային հիմք (C-5) h=20սմ 100մ² համար խիճ (40-70) 10% - 2.6մ³ խիճ (20-40) 35% - 9.1մ³ խիճ (10-20) 20% - 5.2մ³ խիճ (5-10) 10% - 2.6մ³ խիճ (0-5) ավազ 25% - 6.5մ³ ջուր-1.1մ³	մ²	22929,2	2 600	59 615 920
3	Խոշորահատիկ բարձր ծակոտկենությանը ա/բ h=6սմ	մ²	22069,7	6 100	134 625 170
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	22069,7	6 600	145 660 020
5	"Ե" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ²	22069,7	5 100	112 555 470
Ընդամենը IV					493 081 670
V. Իջատեղեր և մուտքեր					
1	10e-IV կարգի նախապես մշակած բնահողի բարձում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի. տեղափոխում լիցք 1կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	234	3 000	702 000
Երթևեկելի մաս					
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակուպիճ) h=10 սմ	մ²	155,92	850	132 532
2	Խճավազային հիմք (C - 5) h=15 սմ խիճ (40-70)- 10% - 1.95մ³ խիճ (20-40)- 35% - 6.825մ³ խիճ (10-20)- 20% - 3.9մ³ խիճ (5-10)- 10% - 1.95մ³ խիճ (0-5)- ավազ 25% - 4.875մ³ ջուր-1.1մ³	մ²	155,92	1 800	280 656
3	Ե տիպի մանրահատիկ խիտ ա/բ h = 5 սմ	մ²	146,92	5 500	808 060
Ընդամենը V					1 923 248
VI. Ջրահեռացում երթևեկելի մասից					
1	Երկայնական վաք Ե-2-20	գծմ	2598	16 000	41 568 000
Ջրնետում կողնակից					
1	10eIV կարգի բնահողի մշակում բարձում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	40	12 500	500 000
2	Հավաքովի Ե-4-20 բետոնե բլոկների տեղադրում	հատ	80	6 600	528 000
3	Հավաքովի Ե-5 բետոնե բլոկների տեղադրում	հատ	60	18 000	1 080 000
Վաք լիցքի շեպի վրա					
1	10eIV կարգի բնահողի մշակում բարձում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	16,2	12 500	202 500
2	Հավաքովի Ե-6 վաքերի տեղադրում	հատ	246	13 000	3 198 000
Հոսքամարիչ լիցքի շեպի տակ					
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	1,05	4 900	5 145
2	9ж-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	6,93	4 400	30 492
3	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում էքս. 1.25մ3 2.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	1,05	12 500	13 125
4	Նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում էքս. 1.25մ3 2.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	11,55	12 500	144 375
5	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում էքս. 1.25մ3 2.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	8,4	12 500	105 000
7	Հավաքովի Ե-8 բետոնե բլոկների տեղադրում	հատ	320	5 100	1 632 000
8	Հավաքովի Ե-7 բետոնե բլոկների տեղադրում	հատ	20	18 000	360 000
9	Հավաքովի Ե-9 բետոնե բլոկների տեղադրում	հատ	60	10 000	600 000
Ընդամենը VI					49 966 637

	VII. Ճանապարհային նշաններ				
1	Նոր ճան. նշանների տեղադրում. այդ թվում՝				
2	- նախազգուշացնող	հատ	155	30 000	4 650 000
	- առավելության	հատ	2	30 000	60 000
	- արգելող	հատ	4	30 000	120 000
	- տեղեկատվության	հատ	6	30 000	180 000
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	6	30 000	180 000
3	Կանգնակ մետ. խող 57x4մմ	հատ	117	15 000	1 755 000
4	Միաձույլ բետոնե հիմք B-15	մ ³	12,28	67 000	822 760
	Ընդամենը VII				7 767 760
	VIII. Նշագծում				
1	Նշագծումը ընդհանուր մակերեսը (թերմոպլաստ h=3մմ. ապակե գնդիկների ավելացմամբ) այդ թվում՝	մ ²	830,9	13 000	10 801 700
	Ընդամենը VIII				10 801 700
	IX. Արգելափակոցներ				
1	Մետ. արգելափակոցների տեղադրում ծ 4մմ. կանգնակներ շվեյեր N16. քայլը 2մ կոշտ հարվածամարիչով	գծմ	2076	33 700	69 961 200
3	Պոլիմերային ուղղորդ սյուների (C-1) տեղադրում	հատ	12	5 500	66 000
	Ընդամենը IX				70 027 200
	X. Հակավթարային ուղիների կառուցում				
	1. Հողային աշխատանքներ				
2	9ж-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ ³	1097,4	2 100	2 304 540
	Նախապես փխրեցված 9ж-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ ³	1829	2 500	4 572 500
3	10е-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ ³	1065	2 800	2 982 000
7	Ավազից պատնեշ	մ ³	68	9 000	612 000
	2. Երթևեկային մաս				
1	Խիճ h=40սմ (առանց խտացման) 20-40 ֆրակցիայի	մ ³	554,8	10 500	5 825 400
2	Խճային շերտի հարթում բուլդոզերով	մ ²	1387	350	485 450
	3. Մետաղական խողովակներ Ø 530մմ				
1	Ավազակոպային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ ³	2,795	7 000	19 565
2	Մետ. խողովակների Ø 530x7մմ տեղադրում	գծմ	43	110 000	4 730 000
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գծմ	41,8	3 500	146 300
4	Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր	մ ³	1,6	100 000	160 000
5	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	6	2 000	12 000
	Ընդամենը X				21 849 755
	XI. Մետաղական ե/բ խողովակներ				
	1. Մետաղական ժարտ=1020մմ խողովակների տեղադրում				
1	9ж-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0.5մ	մ ³	90,6	2 500	226 500
2	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 9ж-VII կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1.0մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ ³	44	2 500	110 000
3	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 9ж-VII կարգի բնահողում խողովակի փոստրակի փորման համար էքս. 1.0մ3 շ. տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ ³	44	2 500	110 000
4	Հող. աշխատանքներ նախօրոք փխրեցված 9ж-VII կարգի բնահողում խողովակի փոստրակների փորման համար էքս.1.0 մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ ³	63	1 900	119 700
5	Խճային հիմք h=30սմ	մ ³	40,013	10 000	400 130

6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100				
	հիմքեր	մ ³	2,28	100 000	228 000
